



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 1127 - Ա

ԳԱՅԱՆՆԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ԵՎ ՌՈՒԶԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԿԻՊՐՈՍԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի՝

1. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Գայանե Գաբրիելյանին 2022 թվականի հոկտեմբերի 4-7-ը և Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ Ռուզաննա Գրիգորյանին 2022 թվականի հոկտեմբերի 2-6-ը գործուղել Կիպրոսի Հանրապետություն (Նիկոսիա)՝ «Շրջակա միջավայրը Եվրոպայի համար» նախարարական համաժողովին մասնակցելու նպատակով:

2. Գայանե Գաբրիելյանի՝ Կիպրոսի Հանրապետություն գործուղման օրապահիկի և Ռուզաննա Գրիգորյանի՝ Կիպրոսի Հանրապետություն գործուղման օրապահիկի և ճանապարհաձախսի հետ կապված ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Ընդունել ի գիտություն, որ Գայանե Գաբրիելյանի՝ Կիպրոսի Հանրապետություն գործուղման ճանապարհաձախսի և գիշերավարձի հետ կապված ծախսերը և Ռուզաննա Գրիգորյանի՝ Կիպրոսի Հանրապետություն գործուղման գիշերավարձի հետ կապված ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի միջոցների հաշվին:

4. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարին՝ ապահովել գործողումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում Կիպրոսի Հանրապետություն գործողման արդյունքների մասին հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն ներկայացնելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան